ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստիկանության տակտիկական պատրաստականության ամբիոնի պատմություն

Ոստիկանության տակտիկական պատրաստականության ամբիոնը ընդգրկված է քոլեջի կազմում: Ամբիոնը ձևավորվել է դեռևս 1994 թվականին՝ ներքին զորքերի Բարձրագույն սպայական դպրոցի կազմում, և ունեցել է զինվորական ուղղվածություն՝ նպատակ ունենալով Ներքին զորքերի սպայական կազմին տալու զինվորական մասնագիտական գիտելիքներ: 1995թվականին ՆԶ բարձրագույն սպայական դպրոցը միավորվել է 1991թվականին ստեղծված Միլիցիայի բարձրագույն դպրոցի (հետագայում ՆԳՆ բարձրագույն դպրոց) հետ, որպես ՆԶ և շարային ստորաբաժանումների հրամանատարական ֆակուլտետ, որի ենթակայության տակ էլ ձևավորվում է Ընդհանուր տակտիկական պատրաստականության ամբիոնը:

Ընդհանուր տակտիկական պատրաստականության ամբիոնը իր հաստիքակազմով իրականացրել է կրթական, մեթոդական, դաստիարակչական, գիտական և հետազոտական աշխատանքներ, ինչպես նաև կազմակերպել և անցկացրել է ուսումնամարզական հավաքներ, որի նպատակն է եղել ուսուցման ընթացքում ստացած տեսական գիտելիքների գործնականում ամրապնդելը: 2011թվականին ՈԶ հրամանատարական ֆակուլտետի երկու ամբիոնների միավորման արդյունքում ստեղծվում է Ընդհանուր և ՈԶՏՊ ամբիոնը, այնուհետև 2019 թվականին վերաձևավորվում ՈՏՊ ամբիոնի: Ամբիոնն ապահովում է մասնագիտական և համազորային ուղղութուններով համապատասխան առարկաների դասավանդումը:

Ամբիոնի պետեր են եղել՝

_ ներքին ծառայության փոխգնդապետ Լեռնիկ Ղազարյան (1995-2002թթ.)

_ միլիցիայի փոխգնդապետ Սամվել Հովհաննիսյան (2002-2004թթ.)

_ ոստիկանության փոխգնդապետ Սամվել Խաչատրյան (2006-2009թթ.՝ ժ/պ)

_ ոստիկանության փոխգնդապետ Գագիկ Թադևոսյան (2009-2016թթ.)

_ ոստիկանության փոխգնդապետ Գոռ Մուրադյան (2016թվականից)

Մասնագիտական գործունեության նկարագրությունը

Ոստիկանության տակտիկական պատրաստականության ամբիոնը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի կառուցվածքային ստորաբաժանում է: Ամբիոնը կազմակերպում է կրթական, մեթոդական, դաստիարակչական աշխատանքներ, իրականացնում է գիտական և հետազոտական աշխատանքներ:

Ամբիոնն ապահովում է մասնագիտական և համազորային ուղղություններում համապատասխան առարկաների դասավանդումը, ինչպես նաև ստուգումների անցկացումը:

Մասնագիտական պատրաստականության ապահովման համար ամբիոնի կողմից դասավանդվում են «Տեղագրություն» և «ՔՊ և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» և«Հատուկ տակտիկական պատրաստականության» առարկաները:

Համազորային պատրաստության ուղղության ապահովման համար ամբիոնի կողմից դասավանդվում են 9 առարկաներ՝ «Մարտավարություն», «Ռազմաինժեներական պատրաստություն», «Ռազմական տեղագրություն», «Պաշտպանություն զանգվածային ոչնչացման զենքից», «Ստորաբաժանումների ղեկավարումը խաղաղ ժամանակ», «ՈՀՏՊ» և «Համազորային կանոնագրքեր», «Շարային պատրաստականություն» և « Կապի կազմակերպումը ՀՈՒ- ում»:

Ամբիոնի կողմից անցկացվում է նաև մարտավարաշարային պարապմունք՝ «Մարտավարություն», «Ռազմական տեղագրություն», «Պաշտպանություն զանգվածային ոչնչացման զենքից» առարկաների ներգրավվածությամբ, գործնական պարապմունքներ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում և գործնական հրաձգություն: